Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության
2021 թվականի հունիսի 25-ի N 254-Լ որոշմամբ

Գործում է սկսած 2021թ. հունիսի 29-ից

Ներդրումային ծառայությունների մատուցման ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Մանրամասների համար կարող եք դիմել
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,
Գանձապետարան, Արժեթղթերով գործառնությունների բաժին
+374 10 59 33 33 ներքին 3275 , +374 10 59 33 43
www.idbank.am

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) ներդրումային ծառայություններ է մատուցում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սահմանելով ներդրումային ծառայության անվանումը, տեսակը, ինչպես նաև արժեթղթերով գործառնությունների իրականացման և ներդրումային ծառայությունների մատուցման սակագները, մատուցվող ծառայություններից օգտվելու միջնորդավճարների, ծախսերի և այլ վճարների, այլ հնարավոր լրացուցիչ գանձումների չափը, որը ներկայացվում է ստորև

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

1.1 ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	
Դեպո (արժեթղթերի) հաշվի բացում	1,000ՀՀ դրամ
Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով հաճախորդների համար դեպո (արժեթղթերի) հաշիվների բացում	Անվճար
Դեպո (արժեթղթերի) հաշվի սպասարկում	5000 ՀՀ դրամ տարեկան
Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով հաճախորդների համար դեպո (արժեթղթերի) հաշիվների սպասարկում	Անվճար

1.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ և ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ*	
Առաջնային տեղաբաշխման աճուրդից ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Պետական Պարտատոմսերի ձեռքբերում	գործարքի գումարի 0.04 %, նվազագույնը 4000 ՀՀ դրամ

Հետգնման աճուրդներին ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Պետական Պարտատոմսերի վաճառք	գործարքի գումարի 0.04 %, նվազագույնը 4000 ՀՀ դրամ
Հայաստանի ֆոնդային բորսայում ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Պետական Պարտատոմսերի առք և վաճառք	գործարքի գումարի 0.04 %, նվազագույնը 4000 ՀՀ դրամ
Հայաստանի ֆոնդային բորսայում ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Կորպորատիվ Պարտատոմսերի առք և վաճառք	գործարքի գումարի 0.05%, նվազագույնը 5000 ՀՀ դրամ
Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների հանձնարարականներով վաճառքի գործառնությունների իրականացում	անվճար

** Ֆինանսական ոչ բանկային կազմակերպություններ — պայմանագրային*
**Բացառությամբ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից սահմանված բացառությունների*

1.3 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՆԵՐՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ և ՄԻՋՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ	
Արժեթղթերի մուտքագրում հաճախորդի դեպո հաշվին	Անվճար
Ներպահառուական փոխանցումներ	Անվճար
Միջպահառուական փոխանցումներ	1,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի փոխանցում Բանկի հետ կնքած բրոքերային գործարքի արդյունքում	Անվճար

1.4 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ, ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ՀԱՆՈՒՄ, ԳՐԱՎԱԴՐՈՒՄ, ԳՐԱՎԻՑ ԱԶԱՏՈՒՄ	
Արժեթղթերի արգելադրում, արգելանքից հանում, գրավադրում, գրավից ազատում	1,000 ՀՀ դրամ
Բանկի հետ կնքած բրոքերային գործարքի արդյունքում	Անվճար
Արժեթղթերի դիմաց եկամուտների ստացում, հաշվարկում, մուտքագրում հաճախորդի հաշվին	Անվճար
Հաճախորդների պահանջով քաղվածքների և տեղեկանքների տրամադրում՝ անկախ գործարքի իրականացման վաղեմության ժամկետի	500 ՀՀ դրամ

«Ոչ պետական արժեթղթերով պահառության ծառայությունները մատուցումն իրականացվում է համաձայն Բանկի միջնորդությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից մատուցվող Ռեեստրավարման և Պահառության Ծառայությունների Սակագների Մասին Կանոնների ***հետևյալ*** հղումով

1.5 ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	
Ներդրողի հանձնարարությամբ արժեթղթերի առք և վաճառքի գործառնությունների իրականացում բորսայական հարթակներում	*Օրական շրջանառությունից* • մինչև 10,000,000 ՀՀ դրամ - 0.08% • 10,000,000 մինչև 80,000,000 ՀՀ դրամ - 0.06% • 80,000,000- 200,000,000 ՀՀ դրամ - 0.05% • 200,000,000 ՀՀ դրամ և ավելի - 0.03 %
Ներդրողի հանձնարարությամբ արժեթղթերի առք և վաճառքի գործառնությունների իրականացում արտաբորսայական հարթակներում	Գործարքի ծավալի 0,2% գումարած միջնորդ ընկերության միջնորդավճարներ
Առևտրային համակարգեր, բորսաներ, բրոքերային ընկերություններ - միջոցների մուտքագրում, ելքագրում/ապադեպոնացում	Առևտրային համակարգերի, բորսաների, բրոքերային ընկերությունների, միջնորդ բանկերի ծախսերը և հարկերը գումարած նշված գումարների 50%-ը:
Այլ գործառնությունների իրականացում	Միջնորդ կազմակերպությունների (առևտրային համակարգեր, բորսաներ, դեպոզիտարիաներ, պահառուներ, ռեեստրավարներ, բրոքերային ընկերություններ և այլ) ծախսերը և հարկերը գումարած նշված գումարների 50%-ը:

- Միջնորդավճարները գանձվում են Հաճախորդի հաշվից ֆինանսական գործարքն իրականացնելիս՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության:
- Արտարժույթով հաշվարկված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, գործարքի պահին Բանկում գործող վաճառքի փոխարժեքով:
- Ոչ ռեզիդենտ հաճախորդների համար սակագները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:

ՀԱՃԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանկը և Հաճախորդը համաձայնեցնում և Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) ամրագրում են փոխադարձ կապի միջոցները տեղեկատվությունը կամ նյութը	ՓՈԽԱՆՑՄԱՆ ՁԵՎԸ (նշվածներից որևիցե մեկը)	ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Բրոքերային հաշվի կամ առանձին ենթահաշվի քաղվածք	• Առձեռն • Էլեկտրոնային փոստ	Ըստ Հաճախորդի պահանջի
Գործարքի քաղվածք	• Առձեռն • Էլեկտրոնային փոստ	Ըստ Հաճախորդի պահանջի
Դրամական շարժի քաղվածք	• Առձեռն	Ըստ Հաճախորդի պահանջի

	• Էլեկտրոնային փոստ	
Սակագների և գործարքների իրականացման պայմանների վերաբերյալ տեղեկություններ	• Հեռախոս • Առձեռն • Փոստ • Էլեկտրոնային փոստ • Վեբ կայք	Ըստ Բանկի կողմից որոշված ժամկետների
Սխալների ուղղում, ճշտումներ	• Առձեռն • Էլեկտրոնային փոստ	Ըստ սխալների կամ անճշտությունների ի հայտ գալու
Այլ տեղեկատվություն	• Առձեռն • Էլեկտրոնային փոստ	Ըստ Բանկի կողմից նախատեսված դեպքերի

Հաճախորդը գործարքների պայմանների վերաբերյալ հարցումները, նրանց իրականացման հրահանգները, ինչպես նաև գործարքի իրականացման հաստատումները Բանկին հասցեագրում է՝

- Ներկայանալով Բանկ և լրացնելով գործարքի իրականացման վերաբերյալ հայտ
- Էլ. փոստի միջոցով
- Հեռախոսազանգի միջոցով

Հաճախորդների կողմից գումարների ապահովումը

Հաճախորդների կողմից մինչև գործարքի կատարումը, պետք է իրենց հաշվին ապահովեն համապատասխան գումարի առկայությունը:

Պայմանագրի ժամկետների մասին

Պայմանագիրը կնքվում է անժամկետ: Պայմանագիրը կարող է դադարեցվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագիրը դադարեցնելու դեպքում Հաճախորդի միջոցները վերադարձվում են ըստ Հաճախորդի հանձնարարականի:

Արժեթղթերի տեսակները, որոնցում կարող են ներդրվել Հաճախորդի միջոցները,

Գործարքներն իրականացվում են ստորև ներկայացված հիմնական և ածանցյալ ֆինանսական գործիքներով.

- բաժնետոմսեր
- պարտատոմսեր, մուրհակներ
- հիփոթեքային պայմանագրերով ապահովված արժեթղթեր և նմանատիպ ածանյալ արժեթղթեր բաժնեմասեր, փայաբաժիններ և նմանատիպ ածանցյալ արժեթղթեր
- ներդրումային հիմնադրամների արժեթղթեր և նմանատիպ ածանյալ արժեթղթեր
- պետական և համայնքային պարտատոմսեր
- արժութային պայմանագրեր և նմանատիպ ածանցյալ արժեթղթեր
- այլ գործիքներ

Գործարքների իրականացման վայրերի մասին

Գործարքների իրականացման վայրերը (կարգավորվող շուկաները) սահմանված են "Արժեթղթերով գործառնությունների իրականացման սակագներ" ցանկում

Գործարքները իրականացվում եմ բացառապես գլխամասային գրասենյակում:

Ներդրումային ծառայությունների մատուցման հնարավոր ռիսկերի համառոտ նկարագիրն, ինչպես նաև հաճախորդներից գործարքների իրականացման պատվերների և հանձնարարականների ընդունման և կատարման ընթացակարգերին կարող եք ծանոթանալ «Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգ»-ում, որը առկա է Բանկի ինտերնետային կայքում www.idbank.am կամ հետևյալ հղումով:

Շահերի բախման կանխարգելմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ

Բանկը ապահովում է շահերի բախման հետ կապված գործողությունները, հաճախորդից գործարքների իրականացման պատվերների ընդունման և կատարման գործընթացը, համաձայն Բանկի «Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգ»-ով, որը առկա է Բանկի ինտերնետային կայքում www.idbank.am կամ հետևյալ հղումով:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

Ֆիզիկական անձանց համար.

- Հաշվի բացման (վերաբացման) համար, բացառությամբ ժառանգատուի հաշվի վերաբացման դեպքի, ֆիզիկական անձ հանդիսացող Հաշվետերը կամ նրա լիազորված անձը պետք է Բանկ ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
- Հաշվետիրոջ անձը հաստատող փաստաթղթ,
- ՀՀ ռեզիդենտ Հաշվետիրոջ հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը, ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
- լիազորված անձի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
- Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

Իրավաբանական անձանց համար.

- Կանոնադրություն
- Ստորագրության նմուշի և կլոր կնիքի դրոշմի քարտը (լրացվում է Բանկի տարածքում)
- Հաշվետիրոջ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
- առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթ,

- իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ անձի իսկությունը հաստատող նույնականացման քարտ (ID CARD)),
- լիազորագրի հիման գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը:
- Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

Ուշադրություն

- Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, բացառությամբ բանկերի կողմից թողարկված պարտատոմսերում կատարվող ներդրումները, ինչպես նաև բանկը հանդիսանում է ֆիզիկական անձանց գծով հարկային գործակալ և կատարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վճարումները:
- *Պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ռիսկը կրում է Հաճախորդը:*
- *Բանկը չի փոխհատուցելու Հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել Բանկի կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում.*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ